

1.03.2021
347-31

ՀՀ առողջապահության նախարար
Անահիտ Ավանեսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Ավանեսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել Livenews.am անցանց պարբերականի լրագրող Թագուհի Ասլանյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: 2021 թվականի հունվարի 21-ին լրագրողը տեղեկություն ստանալու հարցում էր ուղարկել Առողջապահության նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ Համավարակի ընթացքում իրականացված թեստավորումների վերաբերյալ (<http://www.givemeinfo.am/hy/case/3234/>): Ուշացումով տրամադրված պատասխան գրության միջոցով Նախարարությունը հարցերի մի մասին տրամադրել է թերի պատասխան, իսկ որոշ հարցերի առանչվող տեղեկությունը մերժել է տրամադրել:

Ուստի ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Պատասխան գրության մեջ նշված է, որ հարցման 1-ին, 2-րդ, 7-րդ, 8-րդ հարցերին կարող են պատասխան տրամադրել ավելի ուշ՝ 2-րդ եռամսյակում, քանի որ այս պահին իրականացվում են վերլուծություններ, դեռևս հավաքագրվում են հաշվետվություններ: Արդյոք պատասխանից կարելի է եզրակացնել, որ Առողջապահության նախարարությունը այս պահին չի տնօրինում Համավարակի ընթացքում իրականացված ՊՇՌ հետազոտություններին, թեստերին առնչվող քանակական տվյալներ: Ի՞նչ իրավական հիմքով և ի՞նչ պարբերականությամբ է ԱՆ-ն վերոնշյալ հարցերին առնչվող քանակական տվյալները ամփոփում և հրապարակում:
2. Ի պատասխան լրագրողի՝ «Ո՞ր լաբորատորիաներն են աշխատել հայկական արտադրության թեստերով, ո՞ր ժամանակահատվածում» հարցին, նախարարությունը նշել է, որ Հայկական թեստերով աշխատել են «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի լաբորատորիաները: Խնդրում ենք մանրամասնել, թե արդյոք վերոհիշյալ կառույցները քանի՞ լաբորատորիա ունեն և որտեղ են դրանք գտնվում:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836,
Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

3. Ի պատասխան լրագրողի՝ «Ինչո՞ւ են հայկական արտադրության թեստերի ժամկետները թեստի տուփի վրա գրված եղել ձեռքով» հարցին՝ Առողջապահության նախարարությունը նշել է, որ ԱՆ-ն տեղեկություն տնօրինողը չէ: Խնդրում ենք հստակեցնել, թե որ կառույցն է այդ տեղեկության տնօրինողը և արդյոք նշյալ հարցում ԱՆ-ն վերահսկողություն իրականացնելու լիազորություն չունի:

Հարկ է նշել, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն՝ «Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը»: Այնինչ այնինչ ԱՆ պատասխան գրությամբ հարցման 13 հարցերից 5-ը մերժվել է լրացուցիչ ժամանակ խնդրելուց հետո միայն, ինչն օրենքի խախտում է:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով***:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյրոյան

